արար որոնել և քննել զվանս, թէ զի՞նչ արդեօք թողեալ իցեն նախորդք իւր. և ժողովեալ առնա Միաբանաց երդմամբ վկայեցին առաջի նորա, թէ սոքա են զերծեալքն 'ի ձեռաց յափշտակչաց, 3 սկիհ զղինձ, 4 սկիհ արծաթ, 5 կանթեղ, 1 բուրվար, 12 փոքր խաչ և 1 միջակ, յորոյ վերայ տրամեցաւ յոյժ։ Եւ զկնի աւուրց ինչ եկին առ նա աթոռական Հաննա վարդապետ. Սպարկերտցի լուսարար Տէր Դաւիթ, և Ուրհայեցի վերակացու Տէր Յակոբ, եւ ասեն. մի՛ այդչափ տրտմիր եւ հոգայր, զի սակաւ ինչ պահեալ եմք յարդեանց Ս. Աթոռոյն, ազատելով 'ի ձեռաց կեղեքիչ տեղակալաց։ Յորոց վերայ սակաւ ինչ ուրախացեալ, արձանացոյց և զայնս 'ի տուփարին, թէպէտ և նոքա էին ոչ ինչ։ Եւ ապա սկսաւ զարդարել զեկեղեցի Ս. Յակոբայ պէսպէս յօրինուածովք և պատկերօք տնօրէնութեան Քրիստոսի Փրկչին մերոյ, եւ ամենայն Սրբոց նորին։ Կանգնեալ իւրաքանչիւր խորանաց ոսկեզօծ եւ մանրաքանդակ խաչկալս, զիւրաքանչիւրս նուիրեալ յանուն երեւելի անձանց ազգիս, ըստ չափու նուիրաց նոցին, յորոց միջի փայլի Ակնցի Երեւանենց պերճապատիւ Սեղբոս Ամիրայն իւր բովանդակ ազգատոհմիւն, զորմէ լիցին բանք մեր նաեւ յետոյ. դրոշմեալ 'ի ճակատ իւրաքանչիւր յիշատակելեաց զանմահ անուանս բարեբարաց։ Իսկ մեծ խաչկալն Աւագ Խորանի Տեառն եղբօր Յակոբայ Առաքելոյն, գերազանց է քան զամենեսին՝ մեծութեամբ և շքեղ յօրինուածովք, քանդակեալ յիշատակարան 'ի ճակատ նորին երկաթագիր տառիւք, որ ունի օրինակ զայս։

ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱԶՄԵԱԼ ԿԱՆԳՆԵՑԱՒ ՈՍԿԵԶՕԾ ԽԱՉԿԱԼՍ ԵՐԿՆԱՀԱՆԳՈՅՆ ԽՈՐԱՆԻՍ ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲԱՅ ՏԵԱՌՆ ԵՂԲՕՐ ԱՍՏՈՒԱԾԱԴԻՐ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, Ի ԹՈՒԻՆ ՌՃՀ ՄԷԿ ԱՄԻՆ 1171 (1729). Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՍ ԵՒ ԲԻՒԶԱՆԴԻՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ՝ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՏԵԱՌՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՂԻՇԵՑԻՈՅ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՄԲՆ ԵՒ ՋԱՆԻՒՔ ԿԵՐՏԵՑԱՒ Ի ՑԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ ԻՒՐԵԱՆՑ, ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՄԱՐՄՆԱՒՈՐ